# ՕԾՎԵՑ ՄԵԾԱՄՈՐԻ Ս. ՂԱԶԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օծվեց Արմավիրի թեմի Մեծամոր քաղաքի միակ՝ Ս. Ղազար նորակառույց եկեղեցին: Եկեղեցին կառուցվել էր դեռևս 2002 թ. ամերիկաբնակ տեր և տիկին Զավեն և Ազատուհի Դաղեկյանների ազնիվ բարերարությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին և իր շքախմբի անդամներին Արշալույս գյուղի սահմանագլխին դիմավորեցին Արմավիրի մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները՝ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանի և մարզպետ Ալբերտ Հերոյանի գլխավորությամբ: Ապա ամենքն ուղղվեցին դեպի Մեծամոր, ուր բարձունքի վրա վեր խոյացած եկեղեցու առջև հավաքված խանդավառված ժողովուրդը, տարեց և երիտասարդ, ծաղիկներով, աղ ու հացով ողջունեցին Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետին:

Եկեղեցականների թափորի ուղեկցությամբ, Հայրապետական իր օրհնությունը բաշխելով ժողովրդին, Նորին Սրբությունն ուղղվեց դեպի Ս. Ղազար եկեղեցի, ուր կատարեց եկեղեցու օծման արարողությունը: Աղոթքների ընթերցմամբ և հոգեզմայլ շարականների երգեցողության ներքո Հայոց Հայրապետն օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը, ապա Ներսես արքեպս. Պոզապալյանն օծեց Խորհրդարանները, իսկ Սիոն Սրբազանը՝ Մկրտության Ս. ավազանը: Օծումից հետո Վեհափառն օրհնեց նաև եկեղեցու բարերարներին:

Արարողության ավարտին ներկաներին դիմեց թեմական առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանը: «Այսօր պատմական օր է, քանզի այսօր, կամոքն Աստուծո, բախտավորությունն ունեցանք օծելու Մեծամորի այս եկեղեցին: Հիրավի, այս եկեղեցին օդի և ջրի պես անհրաժեշտություն էր այս համայնքի և շրջակա գյուղերի համար: Մենք շատ լավ գիտենք, թե ինչ վիճակում է գտնվում այս համայնքը հոգևոր իմաստով՝ այլազան կրոնական շարժումների բույն դարձած: Սակայն այս եկեղեցին, հառնելով քաղաքի այս բարձրադիր տեղում, դարձավ փրկության փարոս մեր ժողովրդի համար»,- նշեց Սրբազան Հայրն իր խոսքում՝ կրկնակի ուրախություն հայտնելով Նորին Սրբության ներկայության համար և հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունն ամենքին:

*«Բոլորս բերկրանքի և խնդության մեջ ենք, որովհետև երկնքից այսօր, օծմամբ Ս. Ղազար եկեղեցու, օրհնություն է հեղվում վերստին Հայոց աշխարհի և մեր անձերի վրա: Այս բարձունքի վրա Հայոց Եկեղեցու խաչը պարզվեց դեպի երկինք ու հովանի դարձավ Մեծամոր քաղաքին:*

*...Եկեղեցին 1700-ամյա մեր պատմության ընթացքին, երբ չենք ունեցել պետություն, զորք ու բանակ՝ մեր Հայրենիին, մեր տունը պաշտպանելու, եկեղեցին դարձել է ամրոցը մեր ժողովրդի ու համախումբ, միասնական ու ապահով պահել իր հարկի ներքո և առաջնորդել է դեպի նոր ժամանակներն ու դարերը: Եկեղեցու մեջ մենք գտել ենք մեր ինքնությունը, այդ ինքնությունը պահպանելու խորհուրդը: Եկեղեցու մեջ մենք կերտել ենք մեր մշակույթը և մեր պատմությունը:*

*...Որքան ուրախ ենք, որ մեր ժողովրդի զավակներն այլևս Մեծամոր քաղաքում ունեն այն վայրը և աղոթատեղին, ուր պիտի գան իրենց հավատարմությու-*

*ևը պահելու իրենց հայրերին, մեր պապմությանը ու մշակույթին, դարերի մեր երազներին և ուխտելու այս Սուրբ Սեղանի առջև՝ անշեղ ընթացքով կյանքի կոչել այն իղձերն ու տեսիլքները, որ դարերով ծրարած պահել ենք մեր հոգիներում՝ ունենալու հզոր Հայրենիք, պայծառ ու շեն Եկեղեցի և լուսավոր ու բարեկեցիկ կյանք:*

*Վարպահ ենք, որ նորաօծ այս եկեղեցին նորովի պիտի անդրադարձնի առաջնորդի ձեզ, սիրելի մեծամորցիներ, որ Եկեղեցին է եղել փրկության դարպասը մեր ժողովրդի և այն շարունակելու է իբրև այդպիսին գործել մեր կյանքում: Այս գիտակցությամբ, հավատքով ու համոզումով մենք պիտի հեռու վանենք մեզանից ամեն օտար ու խորթ կրոնական քարոզչություն, որ գալիս է մեզ շեղելու մեր հայրերի հավատքից, շեղելու մեր ընթացքից, որ անշեղորեն առաջնորդել է մեզ 1700 տարիներ դեպի Աստված, որ երաշխիքն է եղել մեր հարատևության, լինելության և գոյության»*,- ասաց Հայոց Հայրապետը՝ շնորհավորելով ներկա բարեպաշտ ժողովրդին իրենց քաղաքի եկեղեցու օծման առիթով: Նորին Սրբությունն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց եկեղեցու բարերարներին, որոնց կյանքը եղել է նվիրում ու անմնացորդ ծառայություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն, ազգին և Հայրենիքին:

Վեհափառ Հայրապետը նաև իր բարձր գնահատանքը բերեց թեմի բարեջան առաջնորդին և թեմի բոլոր հոգևոր սպասավորներին՝ հորդորելով սիրով և նվիրումով շարունակել իրենց ծառայությունը: Այս առիթով Նորին Սրբությունը շնորհավորեց նաև Մեծամորի քաղաքապետ Աշոտ Գրիգորյանին, որի անմիջական ջանքերով է կառուցվել եկեղեցին և բարեկարգվել շրջակա տարածքը:

Օծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց համերգային ծրագրին՝ պատրաստված քաղաքի գեղարվեստական խմբերի և արվեստի դպրոցի սաների ջանքերով:

Նորին Սրբության շքախմբի կազմում էին Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը, ազգային բարերարներ:

Ներկայիս Արմավիրի թեմում կան 16 գործող եկեղեցիներ, որոնցում սպասավորում են 15 հոգևորականներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ս. ՂԱԶԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.
ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔ Է ՈՒՂՂՈՒՄ
ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՋԱՎԵՆ ԵՎ ԱՋԱՏՈՒՀԻ ԴԱԴԵԿՅԱՆՆԵՐԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ՄԵԾԱՄՈՐԻ ՆՈՐԱՕԾ Ս. ՂԱԶԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ